ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 226 Ա

ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՐԿՆԱԿԻ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի 31.10.2025թ. N1 արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» N13-Ն հրամանի 82-րդ մասը, ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ և 3-րդ պարբերություններով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացնել կրկնակի մրցույթ՝

աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (պաշտոնի ծածկագիր՝ 3.3-2):

2.Կրկնակի մրցույթի օր նշանակել 2025 թվականի նոյեմբերի 10-ը, ժամը 15:00-ին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

2025 թ. հոկտեմբերի 3 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 227 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՍԱՀԱԿ ԽԱՉԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի բնակիչ Սահակ Խաչիկի Հովհաննիսյանը 2025թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող Սիրանեսի փողոց թիվ 27/1 հասցեի հողամասում (հողամասի կադաստրային ծածկագիր՝ 10-029-0014-0014, նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման) առանց համապատասխան թույլտվության ինքնակամ իրականացրել է շինարարություն, ինչով խախտվել են Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթեր տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 15-ը մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման պահանջները: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի, 219.1–րդ, 305-րդ հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Կառավարության «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 15-ը մարտի 2015 թվականի N596-Ն որոշման պահանջները խախտելու համար Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի բնակիչ Սահակ Խաչիկի Հովհաննիսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2.Առաջարկել Սահակ Հովհաննիսյանին տուգանքը անձնական միջոցներից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում մուծել Եղեգիս համայնքի բյուջեի 900 355 113 060 հաշվեհամարին:

3.Տուգանքը նշված ժամկետում չվճարելու դեպքում՝ այն գանձել օրենքով սահմանված կարգով:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում պատճենը Սահակ Հովհաննիսյանին հանձնելու հաջորդ օրվանից և կարող է գանգատարկվել դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

2025 թ. հոկտեմբերի 5 հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 228 Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքային ենթակայության ճանապարհների վրա ճանապարհային անվտանգ երթևեկությունը և տրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումն ապահովելու նպատակով կազմակերպել ու իրականացնել անվտանգ երթևեկությանը խոչընդոտող ծառերի ճյուղերի կտրում, ինչպես նաև փոսալցման աշխատանքների իրականացում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հոկտեմբերի 5 հ.Եղեգիս